



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


3756

2361



5. 6071.

ሆኖ



Վ Ր Է Ժ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԵՒ ՇՐԱՏԱՐԱԿԵՑ


ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆՑ

Հ Ա Տ Ո Ր Ա Ռ Ա Ջ Ի Ն

Երրորդ սպազրուրիւն յաւելեալ եւ նոխացեալ

Աղի նիշեր արձակումից
թո՛ղ ալ լռէ մեր բերան,
Տանք իրաւունք մեր զէնքերին,
Տեսնեն նորանց դասասան:

Հեղինակ



Տպագրութիւն Մ. Գալփաֆեան — Վանու

Печат. М. КАЛПАКДЖИЯНЪ = Варна

1905—4—3

3756

Ն Ա Ք Ե Ր

ԷՄ ՅԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ

Պ. ԳԱԼՈՒՍ ՆՈՐՅԱՏԵԱՆԻ

Ի ՆՇԱՆ ԱՆԿԵՂԾ ՍԻՐՈՅ

ՄՏԻՍ ԱՌԱՋԻՆ ՊՏՈՒՂԸ

ՀԵՂԻՆՈՒԸ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՄՐԲԱԶՆԱՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԵՒ

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՉՕՆԷ

Ի խոր սրտից բղխած ոտանաւորս

Մատչելով ի համբոյր Ս. Ա. ՉՈյն

Խոնարհ ծառայ

ՎԱՐԴԱՆ ՔԱՄԱԼԵԱՆՑ

1904 Սեպտեմբեր 1

Եալթա





ՆՈՒԷՐ

ՎԱՍՊՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾԻՒ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻՆ

Հայրի՛կ, հայրի՛կ, հայոց իշխանիկ,
Արծիւ Վասպուրականի, անթառամ ծաղիկ,
Աստուածընտիր երկնապարզելի,
Աթուրդ է Արարատ հայկեան աշխարհիկ:

Համայն հայոց մեծ վեհապետ,
Կեցցե՛ս, Տէր մեր հայրապետ.
Կեցցե՛ս, յաւէտ մեր աշխարհի,
Մեզ հովուող բարբուռնապետ:

Տէ՛ր վեհափառ, դու ուխտած ես,
Կարին օծել հարս փեսայ.
Այդ քո իղձը պիտ' կատարենք.
Անկեղծ կ'ասենք սրտով սա:

Թէեւ ոսոխը իւրեանց նետեր,
Արձակում են միշտ դէպ բեզ.
Բայց երկնային մեծ Եհովան
Իր բազկովը պահում ձեզ:

— է —

Ձլոտ բազուկ, պարթեւ հասակ,
Հայաստանի արծիւն ես
Անթիւ խոցեր կան սրտումբդ,
Լուռ վեհութեամբ տանում ես:

Արքայազնեայց բնակավայր,
Մեր պատմական Մասիսի.
Արծիւ կուրծքդ դրած լանջքին,
Կ'հարւիս հողմնփն հիւսիսի . . . :

Բայց այդ բեղի չէ նորութիւն,
Քանի այսպէս մըրկում
Ապագայի յաղթանակը,
Պիտ' ծածանուի քո ճակտում:

Արդէն այն վառ շահն ես միակ,
Հայաստանի արուսեակ,
Կրտակ կատար խորենացու . . .
Իսկ, ուղարկուած հըրեշտակ:

Պարթեւազնեայց տան վեհապետ,
Կեցցե՛ս Հայրիկ, հայրապետ,
Կեցցե՛ս անչէջ ազգիդ փարոս,
Մայր աթուում սրբապետ:

Վեհափա՛ն Հայրի՛կ,

Հայաստան կոչուած տարաբաղդ երկրին՝
նշրկէ հայ ցեղին արիւնը ցայտեց արեւեկն սկեպ-
տիկ ու արեւեկն քերեհաւատ երեսներու վրայ ա՛յ,
արիւնաշաղախ մէկ գառակն է՝ որ կը դիմէ ներ-
կայիւս որդեակ Հայրիկին գիրկը, եւ կ'աղաչէ
որ ունկնդրէ զինքը ո՛չ իբր քնար, այլ իբր լաշ-
կան ողբերգու մը բիշրաւոր վշտերու, զորս հայ-
րենիք շինեց ու ցոցադրեց իր չքնաղ նահատա-
կութեամբը:

Հայրի՛կ, ես բանատեղծ չեմ, բայց հայ
հարստականներու իբր ձշմարիտ ներկայացոցիչ-
ներէն մէկը, իրաւունք ունեւնալ կը կարծեմ բա-
ցագանչել, ո՛խ, հայոց պաշտելի Հայրիկին Ս.
Աջը հաւերոշեցի, Աջը՝ որ ապահովապէս պիտի
պրակէ հայուն ազատագրութիւնը:

Արդ, ազատութի՛ւն, ազատութի՛ւն, սրբագո-
չող հայոց Հայրիկի՛ն իբր խոնարհ նուէր կը ձօ-
նեմ, ի բոլոր սրտէ, ներկայ աղէքախ կտնդոցը
դժբաղդ քնարիս, եւ կը մնամ Նորի՛ն վեհափա-
ռութեան արեւնախոնարհ ճառայ,

ՎԱՐԴԱՆ ՔԱՍԱԼԵԱՆՑ

Հայրենակուռ Հայր սուրբ,


Երբեմն Վասպուրականի քեռատարած ար-
ճիւր՝ իսկ արեւն ատեն հայոց անգոռգական Հայ-
րիկն եղող մեր պաշտելի եզակի կաթողիկոսին
անուան ձօնած եմ ներփակ ոտանուշորը, զոր
պատիւ ունիմ Ձեր հայրութեան եւս ներկայել,
աղաչելով որ հաճիք անցնել զայն արճիւական
տխրախօսիկ արխիւներուն մէջ՝ իբր տկար քնարի
մը յաւեւ տկար լաշերգը, արխիւներ՝ որունք հայ
նահատակութեան արեւեկն նշանաւոր տօքունեկո-
ները պիտի մնան նոյն իսկ դարերու շրջանին մէջ:

Խոնարհ որդի հայրութեանդ

ՎԱՐԴԱՆ ՔԱՍԱԼԵԱՆՑ



Վ Է Ր Ք Ե Ր



Գնա՛ գրքոյկ իմ պաշտելի,
Հայ եղբարքըս տեսնելու,
Եւ բաց սիրտըդ նոցա առջեւ,
Խոր խոցերըդ ցոյց տալու:

Պատմի՛ր նոցա Հայրենիքի
Սեւաբաղդիկ վիճակըն.
Եւ թէ ինչպէ՛ս հէզ զաւակունք,
Մեռնում, կորչում բանտերըն:

Խօսի՛ր նոցա որ չը մնան,
Դառնան իւրեանց տները.
Խօսի՛ր նոցա թէ՛ ձեր տիկնայք,
Քաշում տանում քիւրտերը:

Խօսի՛ր նոցա վառ սրտերին,
Աղի արցանց ծոր-ծորը.
Որ մի բոպէ չունին հանգիստ,
Ազերսում են առ Տէրը:

Խօսի՛ր նոցա, որ ձեզ՝ հայեր,
 Բաւ է ծաղրեն ազգերը.
 Մարդ մը կ'ապրի պատուի համար,
 Որ չ'արատէ օտարը:

Գնա՛ գրքոյի, դու իմ եղբարց,
 Տո՛ւր ականջաց քո ձայնը.
 Գուցէ նորա ազատ կեանքում,
 Մոռցած լինին զամենը . . . :



ՀԱՅԻ ՏՂԱՅ

Մի՛ լինիր երկչոտ,
 Միշտ եղիր քաջսիրտ,
 Որ ըլլաս տէրը
 Ապահով կեանքիդ:

Թէ օրէնք արդար
 Իրաւունք ուզում,
 Սուրբ միշտ՝ ամուր
 Բռնիր քո ձեռքում:

Եւ սիրիւ սրտով
 Եղբօրըդ սիրով,
 Ապա կը յաղթես
 Թշնամիդ ասով


Չըլլայ որ խաբուիս
 Քո ոտիս կըքէդ,
 Զքեզ կը հանէ
 Կենսական փառքէդ:

Վերջին զղձումէդ
 Չես քաղիր օգուտ,
 Կը տանի անդարձ
 Յաւիտեան կորուստ:

Թէ չըլլաս պաշտպան
 Հայրենի հողիդ,
 Քո յաջորդ սերունդ
 Վայ կուտայ գլխիդ:

Ձանա՛ որ լինիս
 Նման քո նախնեաց,
 Ձնջես թշնամիդ
 Քո սուրբ հայրենեաց:

Եւ շիրմիդ վրայ՝
 Որպէս դրօշակ,
 Ծածանուի անունդ
 Յաւերժ յիշատակ:



ՈՐԴԻՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Մեր մայրերը սնուցեր են
Իրանց կաթով մեր կեանքը,
Որ մենք լինենք վեհ հայրենեաց
Ազատութեան պարծանքը:

Ելնենք փշրենք սուլթանական
Մեզ շղթայած կապանքը,
Բաւ է նոյ՛ց՝ մեզի տուած
Անտանելի տանջանքը:

Իամայէլի զարսէն սերուած
Սեւ հագարի որդիքըն,
Մինչ ցե՞րբ շնչեն Մայր եղեմի
Բիւր բիւր ծաղկանց հովիտքըն:

Գնա՛նք, եղբարք, ջնջենք իսպառ
Այն վատ ազգի սերունդը,
Գլորենք մենք օսմանների
Գահը, գէպի անգունդը:

Իսլամներին՝ գնդակահար
Տապալենք մենք գետինը,
Թո՛ղ սարսափի Վոսպոր նստող
Երլարգ-Քէօշկի Համիտը:

Մեր զէնքերի փամփուշտները
Թող որտտան անդադար,
Գլտրելով մահմէտներին,
Ղրկենք գէպի այն աշխարհ:

Գերութիւնը մի՞թէ մեզի
Անվերջ մնայ անընդհատ.
Մե՛նք ենք, մե՛նք ենք այն երկրի
Բնիկ տէրըն հարազատ:

Դէ՛հ շուտ, տղե՛րք, շտապեցէ՛ք,
Գնանք գէպի մարտի դաշտ.
Այնտեղ կռուենք, այնտեղ պարզենք
Մեր հայ ազգի գրօշակ:



ՀԱՅՐ ԻՐԱՌՈՒՆՔԸ

Եւրոպական մեծ պետութիւնք
Գումարուեցան Պերլինում,
Վեհաժողով, նիստ կազմեցին,
Եօթանասուն ութ թուում:

Անկեալ ազգաց խնդիրները
Այնտեղ քննել սկսան,
Համախորհուրդ յանձըն առին
Պաշտպան լինել անտէրին:

Ահա դարի քառորդն անցաւ,
 Ոչինչ չարան իրական,
 Դեռ նոյն ցաւով տանջու՞մ ենք,
 Չը բուժեց մեզ Եւրոպան:

Երեք հարիւր վաթսուէն հազար
 Հայ անմեղներ զոհուեցան,
 Հրաժարուեց անգութ Եւրոպ,
 Այս մեծ հարցի ձեռնարկման:

Մեր հայկական հարցը մի ցոյց,
 Լոկ մատեանում գրեցին,
 Իւրեանց խոստմունք զլանալով,
 Մեզ անպաշտպան թողուցին:

Ողբ, հառաչանք, յորդ արտասուք,
 Հային բաժին հանեցին,
 Արդ, ցաւերնիս կրկնապատկեալ,
 Մեզ արեան ծով ձրգեցին:

Խնդակցական ժպիտները,
 Երլարդ քէօշկին զրկեցին,
 Առ ի պատիւ իսլամներին,
 Հայուն վիշտը ծաղրեցին:

Մեր վերքերը բացին խորին,
 Անսպեղան թողուցին,
 Անբուժելի անթիւ ցաւոց,
 Ենթարկելով լռեցին . . . :



ՀԱՄԱՌՅԻ ՀԻՄՆԵՇՏԻ



Եկ տո՛ւր, մայրիկ, քո համբոյրը,
 Պիտի գընամ Հայաստան,
 Տամ իմ կեանքըս վեհ հայրենեաց
 Վերանորոգ փրկութեան:

Արդէն մայրիկ, երբ ալ լինի,
 Մի օր պիտի ես մեռնիմ,
 Ինչո՞ւ ազգիս ազատութեան
 Այն Սուրբ Գործին չը զոհուիմ:

Մի՛ լար, մայրիկ, իմ անուշիկ,
 Անհրաժեշտ պիտ' երթամ,
 Թէ որ մեռնիմ, ես չը դառնամ,
 Յաւ քո սրտին թող չըլլամ:

Որովհետեւ իմ ինկած տեղ,
 Անթիւ ծաղկունք պիտ' բուսնին,
 Նոր կեանք, նոր փառք պիտ' աւետեն
 Մայր հայրենի աշխարհին:

Իմ հարազատ ազգ, հայրենիք,
 Ի՛նչպէս՝ մայրիկ, ուրանամ,
 Չիք Վասակայ, Մերուժանայ
 Նմանների կարգ մտնամ:

Թէ քո լացին ուշ գնեմ ես,
 Իմ քաղցրրիկ մայրիկս,
 Զիս սնուցող հայրենեացս
 Առջեւ կ'ըլլամ սեւերես:

Երբեք, մա՛յր իմ, դու չի կարծես
 Թէ ձրրի տամ իմ արեւ.
 Անթիւ թուրքեր պիտ' տապալեմ,
 Ապա հոգիս աւանդեմ:

Լե՛ր դու ուրախ, իմ կաթողին,
 Ազգիդ ծաղկեալ գարունով.
 Արշալոյսի այն նոր ծագման,
 Ողջունես իմ գերեզման:

Ամեն ծաղկունք՝ իր թփերից
 Պիտի հնչեն Հայաստան
 Որպէս սոխակը կը դայլայլեն
 Գարնանայնի գալստեան:

Մի՛թէ ես չե՛մ Հայաստանի
 Առիւծասիրտ հայ տղան,
 Որ չը գնամ հուր կայծակներ,
 Թափել թուրքի գլխիկան:

Շո՛ւտ բեր, մա՛յրիկ, իմ զէ՛նքերը,
 Ժամանակ չէ կենալու.
 Ահա՛, հնչեց փողը մարտի,
 Պէտք է երթամ կռուելու:

Խալիֆների իրաւունքեր,
 Քակեց, քանդեց մեր տներ.
 Անմեղ արեանց հոսող գետեր
 Զը գազարան վեց դարեր:

Հայ արիւնով ոռոգուեցաւ
 Ամեն խոռոչք ու խորքեր.
 Վա՛խ, մեր ազգի սրտին վրայ
 Բացուեց մե՛ծ մեծ խոր վէրքեր:

Ա՛խ դու, մա՛յրիկ, հերիք է լաս,
 Պահէ այդ քս արցունքներ.
 Երբոր դառնամ յաղթանակաւ,
 Լուսա իմին այն վէրքեր:

Այլ ես կ'երթամ ի պատերազմ՝
 Լացի փոխան դու խնդա.
 Թող ես մեռնիմ: միայն ազգըս
 Ազատութիւն ըստանայ:

ԲԱՆ Է ՆԻՐՋԵՆՔ

Ահա՛ մեր մայրը ցաւի երկունքում,
 Յոյսը մեր վրայ դրած, սպասում.
 Հոգեվարքի մէջ ընկած տառապում,
 Դեռ մենք քարացած, խորդ խորդ ենք նայում:

Շտապենք եղբա՛րք, տանք նորան գեղ, ճար,
 Որ կանգնի ոտքի հարազատ մեր մայր:
 Մինչ ե՞րբ մենք այսպէս մնամք անտարբեր,
 Առանց նորան մենք կորուստ ենք, Հայե՛ր:

Քանի՞ մէկ քանի լուենք, եղբայրներ,
 Վեց դար շարունակ, որպէս ստրուկներ:
 Մենք առանց հովուի ցրուեալ ոչխարներ,
 Հերիք գայլերի ըլլանք բաժիններ:

Բա՛ւ է, մեր գերեաց լինենք գերիներ,
 Նոցա ոտքի տակ դնենք գլուխներ:
 Ո՛վք են, մեզ նոքա՛ լինին իշխողներ,
 Ծըծեն մեր արեան վերջին կաթիլներ:

Ելնե՛նք, տանք նորանց հուժկու հարուածներ,
 Մարտի դաշտն է մեր կեանքի լաւ ժամեր:
 Մի՞թէ քաջ Հայկայ մենք չե՞նք սերունդներ,
 Որ չառնենք մեր վրէժ նրանցմէ, Հայե՛ր:

Հերիք է ճգնենք բանտի յատակներ,
 Մաշեն մեր հոգիք կապանք, շղթայներ:
 Բա՛ւ է մեր կանայք, դստերք, երախայք,
 Զոհէ թշնամին անթիւ, անհամար:

Դէ՛հ ելնենք, եղբա՛րք, իջնենք մարտի դաշտ,
 Լուծենք մեր վրէժ, գէնքերով անհաշտ:
 Թէ որ մենք այսպէս, միշտ մնանք թմրած,
 Զըլլաք փրկութիւն, իսպառ ենք կորած:

Կուուելով քաջ քաջ, ջախջախենք նրանց,
 Զը թողնենք այնտեղ հետքըն վատթարաց,
 Փոխան Խալիֆաց, Մեծըն Տիգրաններ,
 Բազմին Հայաստան, հայոց արքայներ:

Բա՛ւ է հայրենեաց անվերջ դաւաճան
 Ոտի թշնամիք մեր վրայ խնդան:
 Ըլլանք մեր յետնոց անմահ պարծանքներ,
 Որպէս մեր քաջքըն՝ Վարդան, Վահաններ:

Մեզնից վերցնենք մեզ քանդող Եսեր,
 Հերիք մէկ մէկի ցանենք որոմներ:
 Մեր մայրը մէկ է, մենք ենք եղբայրներ,
 Մենք պիտի փրկենք մեր աշխարհն աւեր:



ՄԵՇ ԻՇԽԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Չէյթունի առիւծ, Պապիկ մեծ իշխան,
 Պարզէ՛ դրօշակ սուրբ ազատութեան,
 Կոտորէ թուրքը, ցեղ իսլամական,
 Վերջ դիր այդ զազրած անգութ բռնութեանց:

Նժոյգի նստած, մերկ սուրը ձեռիդ,
 Հրաման տայիր անթիւ զօրքերիդ:
 Օ՛ն, զօրքըդ քաջ քաջ, ընդդէմ ելնէիր:
 Տաճկաց բանակին խիստ հարուած տայիր:

Ընէիր զօրացըդ սաստիկ հրաման,
 Բաշէիր բանակըդ գնայիր դէպ Վան,
 Լուայիր արիւնով մեծ Վասպուրական,
 Առնէիր բերդըն մեր հնադարեան:

Հայկազըն իշխան, Պապիկ զօրապետ,
 Փախչի թշնամին ահեղ կեռ սրբէդ.
 Զէյթունի քաջեր առնելով քեզ հետ,
 Անցնիս ի Սասուն դէպի Մանազկերտ:

Մեր սպարապետ մեծըն Թաթուլի
 Վրէժըն լուծես աւերակուտի.
 Մեղացոց արեամբ դաշտեր ոռոգուի,
 Զը թողնես այնտեղ նորանցից ոչ մի:

Վայրենի ցեղըն, խիստ հրոյ ճարակ,
 Վառէիր նորանց՝ որպէս մի պուրակ,
 Բո յաղթանակին անվերջ յիշատակ,
 Պարզէիր՝ Կարին, հայոց գրօշակ:

Շուտ հասնէր գուժըն Ապտիւլ Համիտին,
 Սարսափը տիրէր Երլտըղի Քէօզկին.
 Խաւարը պատէր Վոսպորի ափին.
 Ողբ ու կոծ տեղար Խալիֆի գլխին:

ՄՕՏ ԱՊԱԿԱՅՈՒՄ

Ահա՛, մօտ է ժամանակը,
 Դրօշակներ հայկական.
 Առի՛ծ, վիշապ, բազէ, արծիւ,
 Պիտ՛ ծածանուին նախնական:

Կիսալուսինն՝ անհրաժեշտ,
 Պիտի ձգենք ոտքի տակ,
 Թող չը յուսայ այն հրէշը,
 Թէ կը մնանք սրին տակ:

Ժամանակըն արդէն հաս է,
 Վերջն է նոցա օրերին,
 Մեր սրերի բերաններէն
 Պիտ՛ վազցունենք արիւննին:

Այսուհետեւ չը պիտ՛ թողնենք
 Որ մեր առջեւ շունչ առնեն,
 Գնդակահար պիտի անենք
 Այն չիք տարրը անօրէն:

Ո՛չ, Բահաղը թող չը կարծէ,
 Միշտ կը մնայ հոգէառ.
 Մեր մայրենի սուրբ աշխարհը
 Պիտի փրկենք անպատճառ:

Հայ արիւնը բաւ է խմեն,
 Լպիրչ ցեղքըն անիրաւ.

Հին դարերի վրէժները
Պիտի առնենք մենք հարկաւ:

Արդէն հայքըս զէնքի գիմած,
Ոխ ենք լուծում անգաղար.
Մենք քաջ նախնեաց որդիներըս,
Ուխտադրուժ չենք ըլլար:

Միշտ մղելով ընդդէմ թրքաց,
Սհեղ կռիւ անընդհատ.
Բնաւ պիտի չառնենք դադար,
Մինչեւ փրկենք մեր աշխարհ:

ՍՈՒՊԱԿԻ ԳԱՐՈՒՆԸ

Բնական է որ սոխակն,
Խիստ սիրում է վարդենին,
Նստիլ երգել թփին վրայ,
Իւր բազմըրիկ մեղեգին:

Նա ջերմ սիրով փափաքում է,
Գարնանայնի գալստին . . .
Որ տայ սիրոյ համբոյրները,
Կարմրաայտ վարդերին:

Թրթում է քնքոյշ սիրտը
Հէզ սիրահար էակին,
Տեսնել գարունն և գայլայլել,
Իւր հայրենի մէջ հողին:

Դեռ նա կ'ողբայ մեղամաղձոտ,
Սրտի խորքէն մեղեգին,
Թէ իւր ձեռքէն որպէ՛ս թռաւ,
Ս,յն գարունը թանկագին . . . :

Եւ թեւերը գլխին քաշած,
Ողբերգում է ցաւագին,
Մի՛ թէ այն վեհ գարնան նման
Պիտ' չի տեսնէ՞ նա կրկին:

Ա՛խ անիրաւ, անգուժ տարերք,
Ի՞նչ էք ուզում սոխակէն,
Թողէ՛ք նորան ազատ երգել,
Իւր հայրենի վայրերէն:

Նա վաղուց է մեղեգիներ,
Արձակ ձայնով չէ յորդեր.
Փոթորկալի եղանակներ,
Պատճառում են արգելքներ:

Նամանաւանդ հիւսիսային,
Սաստիկ հողմըն փչում է . . .
Կայծակի շանթ արձակելով,
Մռնչում ու փնչում է:

Որչա՛փ կ'ուզէ, թող նա փչէ,
Մեր սոխակին հոգը չէ.
Այգպէս օրեր շատ տեսեր է,
Զմրան վերջը գարուն է . . . :

Արդէն երբեք չէ երկնչեր,
Մրրկածուխ ամպերէն.
Նորա համար խոչնդոտներ,
Խաղալիքներ եղեր են:



ՔՈՅԻԸ ԵՒ ԵՂԲԱՅԻԸ

Մասիս

Ես Մասիսըս սեւ բողուած եմ,
Դու չե՛ս տեսներ, Արա՛րատ.
Այդպէս անհոգ, զուարթերես,
Որպէս արքայ բազմեր ես:

Աբարտ

Մի՛ նորոգեր իմ վշտերըս,
Քո՛յր իմ, անո՛ւշ հոգեակըս.
Ա՛խ, ցաւերս խիստ, խիստ շատ են,
Կորուսեր եմ իմ թագըս:

Մասիս

Այն օրուանից տխուր ամպուած,
Գլխիս բաշած սեւ բողըս.
Հառաչանքներ արձակելով,
Կը փնտռեմ իմ տէրըս:

Աբարտ

Հայկ ու Տրդատ, Տիգրան, Արամ,
Կորուսի այն վեհագներս.

Արդեօք նորա ո՞ւր են նիրհում,
Գան փարատեն այս ցաւերս:

Մասիս

Երբ կը տեսնեմ օտարազգիք,
Որ մեր վրայ իշխում են,
Սրտածմլիկ քօղիս տակէն,
Աչքէս արցունք հոսում են:

Աբարտ

Այդ նետերը արձակելով,
Հոգւոյս տունը մի՛ բանդեր.
Արդէն վերբով ես անթիւ եմ,
Մաշուած սիրտըս մի՛ վառեր:

Մասիս

Հրաչեայ, Պարէտ, Զաւէն, Շաւարշ,
Ո՞ւր են անյաղթ վեհագնիք.
Այն քաջ խրոխտ առիւծներից
Սարսում էին թշնամիք:

Աբարտ

Ո՛հ այն տիպար Հայկազունքըն,
Երբ ինձանից խլուեցին,
Փառաց օրերս գորշոտուեցան,
Իջան մշուշք իմ գլխին:

Մասիս

Կար ժամանակ, մեր ճակատին,
Առիւծ, վիշապ դրօշակ.
Ամէն մի ազգ խոնարհում էր,
Մեր քաջերի տիգաց տակ:

ԱՐԱՐԱՍ

Վե՛րջ դիր, բոյր իմ, այդ թախծալի,
Հոգեհանիչ խօսքերին . . .
Յիշեցուցիր այն օրե՛րն՝
Մեծն Պարոյր արքային:

Մասիս

Է՞ր չը յիշեմ՝ այն դարերը . . .
Կամ երազ էր կամ իրաւ .
Բազէ, արծիւ ծածանում էր,
Գազաթներէս, որ թռաւ:

ԱՐԱՐԱՍ

Շանթի նման հարուած տուիր,
Իմ վիրաւոր թոյլ կրծքին .
Մտաբերի յաղթող արքայն,
Մեծն Արտաշէս Պարթևին:

Մասիս

Ո՞ւր են արդեօք իմ հարազատ,
Թորդոմատան որդիքըն . . .
Մի՛թէ այն օր պիտ՛ չլինի՞,
Նորա նստին իմ գիրկըն:

ԱՐԱՐԱՍ

Ես իմ յոյսըս չեմ կտրրած,
Այն վեհ բաջաց սերընդէն .
Անհրաժեշտ պիտ՛ փրկեն,
Մեզ այս սրգոյ օրերէն:



ՄԵՁՆԻՅ Է ԿԱԽՈՒԱԾ

Բա՛ւ է, հայե՛ր, գլուխ ծռենր,
Ժամանակ է զինուելու .
Ճակատ պարզենր դէմ թշնամեաց,
Մեր պատիւը փրկելու:

Քանի՛ մէկ դար մնանք այսպէս,
Անբազդ, գերի, անիշխան .
Մեր բազուկն է մեզի փրկող,
Անվերջ սիրով անսահման:

Միշտ կորչում է հայութիւնը,
Զու՛նի ոչ մի օգնական .
Իսպառ կ'ուզեն նորան ջնջել,
Խլել ձեռքից Արմենիան:

Նոր վահաններ, նոր վարդաններ,
Հանգէս թող գան ազգութեան .
Անտէր հայոց սուրբ դիակներ,
Բա՛ւ է լինին տեսարան:

Մեր յոյսերըն երբե՛ք, եղբա՛րք,
Այլոց վրայ թող չըլլան .
Մեր շողջողուն գէնքերովը,
Մենք պիտ՛ լինենք մեզ պաշտպան:

Թէեւ իսախիֆք միշտ հաշուած են,
Հայաստանը սեփական .

Բնական է յիմարները,
Շատ սխալներ կ'ունենան:

Աղի ճիշեր արձակումից,
Թո՛ղ ալ լռեն մեր բերան.
Տանք իրաւունք մեր զէնքերին,
Տեսնեն նորանց դատաստան:

Մեր կոյս աղջիկ ու հարսունքներ,
Մինչ ե՞րբ ծածկեն սեւ քօղեր.
Խաւար բանտի կապանքները,
Մեզի լինին բաժիններ:

Դէ՛հ շուտ, եղբա՛րք, ելնենք զինուինք,
Ստրկութեան վերջ տանք մենք.
Մեր օրերով նոցա արիւն,
Որպէս գետեր հեղեղենք:

Երբե՛ք, երբե՛ք յոյս չի դնենք,
Նենգ Սուլթանի խօսքերին.
Կեղծ սրտովը բաւ է նա միշտ,
Մեզի մատնէ սեւ հողին:

Ելնե՛նք, եղբա՛րք, շտապենք մենք,
Գնա՛նք, գնանք մարտչելու.
Համիտական անարգ լուծը,
Մեզնից իսպառ վերջ տալու:



ՍԳԱՒՈՐ ՄԱՅՐԻԿ

Մա՛յրիկ, մինչ ե՞րբ քեզ սեւ քօղով,
Պիտի տեսնենք շղարշուած.
Ալ չենք կարող մենք հանդուրժել,
Տեսնել այդպէս անբուժուած:

Ա՛րդ, որդիքըդ թեւ ենք առած
Սաւառնում՝ ենք քօ վրայ.
Երբեք պիտի չառնենք դադար,
Մինչեւ չերգես դու ազատ:

Մի՞թէ քեզի վիճակուած է,
Միշտ տանջանք ու տառապանք.
Ո՛չ, ո՛չ այդպէս քեզ չենք թողնել,
Շուտ կ'ստանաս դու նոր կեանք:

Մենք ուխտեր ենք՝ թափել վերջին,
Մեր արիւնը բոսորակ.
Ո՛չ, սրերնիս պատեան չիջներ,
Մինչեւ չառնենք յաղթանակ:

Քո սուրբ կրծքին պիտ' ծածանենք,
Ազատութեան դրօշակ.
Այդպէս լքուած ու կաշկանդուած,
Պիտ' չի թողնենք ոտքի տակ:

Քո անգրանիկ և հարազատ
Որդւոց փառքըն ու պարծանք,

Անհրաժեշտ պիտի տեսնես
Այն վեհ յաւէտ բերկըրանք:

Ահա՛ մօտ է, թշնամիրըդ,
Որ պիտ' տեսնես խոնարհուած.
Նոցա կեանքը բեզի գրաւ
Պիտի ընենք անկասկած:

Այն փշալի անապատներդ,
Պիտի ըլլան բուրաստան.
Դարձեալ պարծանք վես աշխարհին,
Դու պիտ' լինիս Հայաստան:

Գեհօն, Փիտոն, Տիգրիս, Եփրատ,
Յնձա՛ Եգեմ՝ պիտ' գոչեն.
Ծափ խփելով ափուներները,
Պարեպտոյտ պիտ' թռչին:

Արդէն, մա՛յրիկ, մեր արիւնով
Լուանում ենք վէրքերըդ.
Կեանք չենք խնայում քո կենացդ,
Մինչև տեսնենք բուժուելըդ:


Ա Ս Տ ՈՒ Ա Մ

Ա՛խ, դու Աստուած, Հայոց ազգին,
Դեռ պիտ' լինի՞ս մոռացող.
Նա իւր կեանքում երբեք՝ քեզի,
Ո՛չ, չէ եղած ուրացող:

Մի՞թէ չը կայ այդ սրտումդ
Մանանխի չափ խղճմբրտանք,
Որ չես ուզում տեսնել Հայի
Այս դարեւոր գերգերանք:

Սա բնական չնաշխարհի
Ամէն փառքէն զրկել ես.
Դա չէ օրէնք Աստուածութեան
Որ տառապման մատնել ես:

Վրագ չունիս ո՛չ դատաւոր,
Ո՛չ դատաստան, ո՛չ իշխան.
Անհարց, Հային ուղարկումես,
Խոր ու խաւար գերեզման:



Գ Ո Վ Ե Ս Տ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Դրախտավայր Մայր Հայաստան,
Չորս կէտ ունիս աննման.
Հովիտներդ ծաղիկներով,
Գեղատիպար բնական:

Խիտտ կը փայլիս աստղի նման,
Հրաշազարդ տեսարան.
Գերազանց ես ամեն դիրքով,
Ո՛վ հոգեակ իմ պատուական:

Անտառներդ մեզըր և կաթ,
Ծործորում են մշտական,
Վճիտավազ աղբիւրներըդ,
Կեանք բաշխում են մարդկութեան:

Սագսոնիան, Զուիցերիան,
Ոչ նորվէկիան բեզ կուգան,
Բնաւ չի կայ բեզի նման,
Զնաչխարհիկ հայկական:

Գէհոն, Փիսոն, Տիգրիս, Եփրատ,
Ուռզում են դաշտերըդ,
Ամեն ազգաց սուրբ գրբերըն,
Նկարեր են դովեստըդ:

Եւ բիւրաւոր ծաղկունքներըդ,
Հիւսուած նոճեաց ճակտերին,
Ա՛խ, օտարաց ես բուրաստան,
Ո՛չ որդւոցդ հայերին:



ԸՆԴԴԷՄ ԵՌՐՈՊԻՈՅ

Ե՛ւրոպ, մինչ ե՞րբ հայուն խաբես,
Մատով ցոյց տաս մատեանը,
Դու խիզճ չունի՞ս, գըթալ անմեզ
Մանուկների արեանը:

Դեռ չը տեսանք մենք բեզանից
Նշոյլի չափ բարիք մը,
Համբերելով մեր կեանք շիջաւ,
Զը դործեցիր հրաշք մը:

Ե՛ւրոպ, ինչո՞ւ շուտ մոռացար,
Ա՛յն քո հպարտ խօսքերին,
Որ երբ հայը ներկայացաւ
Վեհաժողով ատենին:

Դու ասացիր, պիտ' ծածանենք
Դրօշակըն հայկական,
Հապա ինչո՞ւ չեղոքացար,
Ո՞ւր է խոստմունքըդ իրական:

Նայի՛ր դէպ ի Հայաստանը,
Սեւ քօղով է ծածկուած,
Անմեղների դիակներով,
Լեռներ, ձորեր կուտակուած:

Ո՛վ դու Եւրոպ, մի՛ ուրանար,
Արդար արեանց իրաւունք,
Իրագործէ՛ այն խոստմունքըդ,
Բա՛ւ է թափուին մեր արիւնք:

Միթիւնկներով, հա՛, խաբում ես,
Հայի դժբաղդ սերնդին,
Ա՛խ, շահամուլ բեզ Եւրոպա,
Մնացեր ենք քո խղճին . . . :



ԱՋԱ ԺԱՄԱՆԱԿՆ Է

Ահա՛, հայեր, ժամանակն է,
Որ ու վրէժ լուծելու.
Մեր ժանգոտած թըրեր՝ նոցա
Արիւններով լուարու:

Թողնե՛նք, եղբա՛րք, բէն ու նախանձ,
Ցանք ձեռքերնիս միմեանց.
Մեր հարազատ սուրբ հայրենիք,
Հերի՛ք լինի խշտիկ շանց:

Առիթ չը տանք՝ որպէս առիւծ,
Իսկոյն իշներ մարտի դաշտ.
Հրոյճարակ ընենք ամբողջ
Այն խուժանը զրադաշտ:

Մեր սխերիմ՝ չիք թշնամեաց,
Մինչ ե՞րբ ծնկի գանք՝ առաջ,
Եւ գլխահակ մօտենալով,
Առնել պագնել ձեռքերն աջ:

Արդէն նորա՛ որպէս վիշապ,
Հուպ տալ կուզեն հայերիս.
Եղբա՛րք, դարձեալ թմրա՞ծ միանք,
Չը պաշտպանե՞նք անձերնիս:

Այն վայրենի լպիրշներին,
Բաւ չէ՞ ըլլանք ծաղրելիք,

Որք հայ կինըն ու աղջիկըն
Կ'անեն իրանց հարէմիք . . . :

Քանի՛ դարեր միանք այսպէս,
Հաճոյքներին գործիքներ,
Եւ հնազանդ հլու ծառայ,
Կրել անվերջ հարուածներ:

Օ՛ն, ընթանանք սուսերամերկ,
Հերիք նոցա տեղիք տանք.
Այն տեղն է մեր կեանքի ազատ,
Սուրբ փրկութեան յաւերժանք:

Թնդանօթի որոտումը
Վախ թող չ'ազդէ մեր սրտին,
Օ՛ն, դու ուղմի ահեղ դաշտում
Կռիւ մղենք, շունչ վերջին:

Եւ սրախող անենք նորանց,
Ո՛չ, չը թողնենք մի հատին.
Բա՛ւ է նորա մեր թիկունքին,
Խօսին, իշխեն մեր անձին:

ՎԵՏԱԼԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Ա՛խ հայրենիք, մինչ ե՞րբ այդպէս,
Քլխիդ տեսնեմ սեւ բողբ.
Վաա, զազրելի թշնամիքըն
Լինին վրագ իշխողը:


Երբ ես ծնայ ըստ սուրբ ծոցում,
 Նախ՝ ուխտեցի քեզ սիրել:
 Այդ դարեւոր ժանգոտ շղթագ
 Պարանոցէդ փըշըրել:

Որովհետեւ՝ անտանելի
 Նախատանք է ինձ համար,
 Որ ես տեսնեմ օտարները
 Քեզի իշխեն, հա՛յ աշխարհ:

Մէջըդ հանգչող վեհազների
 Դամբարանքըն՝ բայքայուած.
 Զից դարերով ոտքի կոխան,
 Բաւ է տեսնեմ ծածկուած:

Թէ որ կեանքըս՝ ես խնայեմ,
 Քո կենացը զոհեցու.
 Աչքիս լոյսէն թող զրկուիմ,
 Դէմքըդ անգամ տեսնելու:

Անշնշելի պիտի մնայ
 Այդ ըստ սէրդ իմ սրտում.
 Մինչ աւանդեմ ես իմ հոգիս,
 Քու անուշիկ սուրբ գրկում:



Ա Ո Յ Ե Ր Կ Ի Ն Ս

Անխի՛ղճ երկինք, ե՛րբ պիտ՛ գթաս,
 Պիտ՛ լսես հայերիս.
 Մի՛թէ չիկա՞յ քեզի Աստուած,
 Որ դու բուժես ցաւերնիս:

Մառախլապատ խոպոպ ամպերդ
 Իջեցուցիր մեր գլխին.
 Եւ ըստ գո՞ներ՝ հային համար,
 Դու գոցեցիր մըշտագին:

Արգետք ո՞ւր է արդարադատ
 Այն անաչառ կշիռըդ.
 Ի՞նչ է այս ըստ դարէ ի դար,
 Մեզ տանջելդ ու ատելըդ:

Քո բնական հողագնդիդ
 Մէջ՝ մի օրիկ չունեցանք.
 Ա՛խ, անիրաւ ու աներես,
 Շատ ու շատ են ըստ յանցանք:

Հրաշագեղ աստղերդ շար շար,
 Խիստ փայլում են բարձրէն.
 Եւ լուսինըն նոցա մէջտեղ,
 Պտոյտ կուտայ լըջօրէն:

Հէգ հայերիս վիշաքն՝ նորա,
 Միշտ տեսնելով ծագրում են,

Իւրեանց ցոլուն գէմքեր՝ մեզնից
Գարձնելով՝ սահում են:

Արեգակդ ալ՝ սուր սլաքներ
Արձակելով մեր սրտին,
Եւ իւր կիզիչ բնութիւնով
Խորովում է մեր հոգին:

Հուր հրաշէկ կայծակովդ ալ,
Մեզ անխնայ կ'հարուածես.
Այդ երկնայնիդ խարազանը՝
Միշտ մեր գլխին կ'իջուցես:

Գորշ անսահման կապոյտ ծով մը՝
Իիլ մէջն օդին կանգնում ես,
Անձրեւ, կարկուտ, ձիւն եթերէդ
Դէպ ի վար վար տեղում ես:

Այդ շիթերը՝ կրծքիդ մօտէն,
Աջ և ահեակ հոսում ես,
Որ հայ սրտից վազած արեան
Ճապաղիքներն անհետես:

Խիտ ամպերի ետեիցը,
Մեր վիճակը դիտում ես . . .
Եւ դու մեզնից քո պատկերը
Մշուշներով պատում ես:

Ահա՛, ճգնաժամի մէջ ենք,
Հարկաւ, այդ դու քա՛ջ գիտես.

Արեան հեղեղներ են վազում,
Գարձեալ չեզոք և անտես:

Քո ինչքո՞վքդ գովենք հայրըս,
Կամ ի՞նչ սրտով փառք տանք քեզ,
Որ չը տեսանք, գէթ սրբէիր,
Մեր արտասուք աղեկէզ:

Մեր դարեւոր հառաչանքըն,
Երբեք չազդե՞ց երկներիդ.
Ա՛խ, ցաւերնիս բարձրանալ,
Ծակէր, մտնէր քար սրտիդ:

Օ՛, ըոպէներ, ժամեր, օրեր,
Ամիսք, տարիք և դարեր,
Հայ աչքերից չը դադարան,
Արտասուքի հեղեղներ:

Դեռ պիտ' այրե՞ս մեր սրտերը,
Ե՞րբ պիտ' ցոյց տաս այն օրեր,
Որ հայութեան դրօշակն
Ալ, ծածանուէր քո եթեր:

Ի ՁԷՆ ՀԱՅԻՆՆԵԱՅ

Պատերազմի չեփորներըն,
Ամեն կողմից թող հնչեն.
Մենք անվեհեր, կեռ սուր մեր մէջը
Կապած, շտապ դաշտ իջնենք:

Հերի՛ք խաբուի՛նք, գիմակաւոր,
Կեղծ ու պատիր դէմքերէն,
Որք յարաժամ մեզ շոյելով,
Մեր արիւնը բամու՛մ են:

Հա՛յք, մեր ջլոտ բազուկներըն,
Ո՞ր օրերին կը պահէնք.
Արդ, հայրենեաց ներկայ վիճակ,
Ահա՛, մենքըս տեսնու՛մ ենք:

Հայ մանուկը՝ տաճկի սրբից,
Զո՛հ գնալով՝ մեռնու՛մ է.
Դեռ չը բացուած ծաղիկ կեանքը,
Գոռ գերեզման տանու՛մ է:


Եւ երբ մայրը՝ այս սեւորակ
Տեսարանը տեսնու՛մ է,
Որդեա՛կ, որդեա՛կ հառաչելով,
Այն ալ հոգին փչու՛մ է:

Դեռ մենք անշարժ, սառըն սրտով,
Մեր վիզ ճըկած նայում ենք,
Թէ իւր կիրքը ս՛րպէս յագում,
Վայրագ թուրքը, գազան, նենգ:

Լաւ է, եղբարք, մեր մահ կնքել,
Քան թէ տեսնել Հայրենիք
Կամ հարազատ սիրելիներ՝
Նոցա ձեռին խաղալիք:

Մեր թշնամիք՝ բա՛ւ է կարծեն,
Արամեանքըս երկչոտ ենք.
Հրացան ձեռներս իջնենք բաջ բաջ,
Դէմ առ ընդդէմ խիզախենք:

Մոլի, զազիր ցեղի արեամբ՝
Հայկեան դաշտեր ոռոգենք.
Այս տխրագին սեւորակներ,
Մեզնից յաւէտ փարատենք:



Հ Ա Յ Կ Ղ Ե Ր Ը

Ո՞ւր են արգեօք մեր սուրբ հարբըն,
Զեօքեր առնեն խաչափառ,
Եւ գան հանդէս՝ որպէս Ղեւոնդ,
Խրախուսող սրտեր վառ:

Ո՞ւր են գասքըն բահանայեաց,
Պարտաճանաչ երէցներ,
Անձըն իրանց զո՛հ բերելով,
Հանգիստնալ Ղեւոնդներ,

Երբեր նորա՝ այս սրբազան,
Պաշտամունքըն չունեցան.
Դորա համար ազգի ցաւերն,
Օր ըստ օրէ աւելցան

Երբ ասումենք նոցա՝ տիա՛րք,
Մեզ չի մնաց քաշելէք.
Մեզա՛յ օրհնածք, ի՞նչ կայ լալու,
Դեռ շատ ունէք տեսնալիք . . . » :

Ահա՛, եղբա՛րք, հայ կղերի
Միշտ մեզ բրգած բարոզներ.
Այ ի՞նչ հարկ կայ տեսնել քնում,
Անուշ, անուշ երազներ:

Երբ ձայն լսեն մամոնայի,
Թեւ առնելով թռչում են.
Խաչ ու բուրվառ, մաշտոց, փիլոն,
Ի միասին տանում են:

Հոգեհանգիստ, փեսապսակ,
Ուրախ, ուրախ երգում են.
Տաք տաք շոգիք դուրս դուրս տալով,
Անթիւ օրհնենք հոսում են:

Այբ ու ձա ի շարականներ,
Զիլ ձայներով ասում են.
Քիչ մնում է կոկորդներէն,
Լեարդերնին ալ դուրս բերեն:

Բայց երբ ազգին օրհասական,
ձգնաժամը տեսնում են.
Այդ ալ միայն Աստուած գիտէ,
Ո՛ր ծակերը սզլում են . . . :

Մեր հոգեւոր իշխաններին,
Ի՞նչ տեղիք կայ բան ասել.
Բանն ասանկ է, սրբազաններ,
Ոչ թէ ձեզի բանբասել:

ՀԱՅԻ ՎԻՃԱԿԸ

Դարերը շար շար կուգան ու կ'անցնին,
Մեր օրն ու արեւ նոյն խորն է մթին.
Արեան ծարաւի թշնամիներըն,
Դեռ կրժոտում են մեր սիրան ու հոգին:

Մինչ ե՞րբ վշտալի՛ ձայներ եղկելի,
Լսեն մեր աղանջը, հարազատների.
Եւ տեսնել վիճակ նոցա զահրելի,
Մատնուած դառն ճգնաժամերի,

Եւ դեռ դեռահաս՝ ծաղիկ կոյսերաց,
Բռնի քաշկում են՝ մօրանց գրկերէն.
Ճիչ ու բարբանջանք՝ եղուկ ծնողաց,
Ի զուրբ, դէպ ի օգը ցնդում են . . . :

Հա՛յբ, միթէ մեզի դեռ չէ՞ նախատանք,
Նորածին մանկուեր՝ հանդէպ մեր աչքի,
Դահիճ խուժանաց՝ դառնում են տափնանք,
Անմեղ մանուկներ դրում են հոգրի:

1985

Այլազանների նողկալի արարք,
 Անասելի են նոցա մրտանք . . .
 Լաց ու հեկեկանք, կող ու կողկողանք,
 Բռնել է զաշխարհ, ալգի աղետանք:

Ա՛խ, այն տմարդի շիբ նենգամիտներ,
 Մի՞թէ անընդհատ մեզի իշխողներ,
 Կամ մի՞թէ նոցա ոտանց հողաթափ,
 Գարեր շարունակ, պիտ' ըլլա՞նք, հայե՛ր:


Հերի՛ք է, եղբա՛րք, գահէ զրկուած,
 Թշնամեաց թրէն մեր կեանքը կախուած,
 Ձեռքերնիս ծալած, ապշած, շուարած,
 Մէկուպի, մահը հազարի փոխած:

Հի՞մի էլ նիրհներ, հայե՛ր, հի՞մի էլ,
 Որ մեր ազգային աւանդ սրբութեանց,
 Մեկնում են զօտարք պղծեալ ձեռներն,
 Տանել կրքերի յաղթանակ իւրեանց:

Սթափուենք, եղբա՛րք, ա՛լ բաւ է նիրհներ,
 Հորթի բազկաց ուժերը ցոյց տանք,
 Վատազգիներին հուր ու փուր անենք,
 Եւ շարենք զանոնք դէպ ի խորխորանք:

Կեանքի ասպարէզ դէպ ի սլանանք,
 Պարզենք ճակատներ՝ թշնամու դիմաց,
 Հայոց դաշտօրայք, օ՛ն, արեամբ լուանք,
 Արբենք զարտասուք՝ յաջորդ սերնդաց:

Մինչ ե՞րբ լոկ խօսենք, եղբա՛րք պատուական,
 Հայք սրտով ձուլուած պէտք է գործնական,
 Ետ առնենք խլուած մեր թուրն ու թագ,
 Ապա թէ ասենք ԿԵՅՅԷ՝ ՀԱՅԱՍՏԱՆ:



ՆՈՒԷՐ ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԷ

ՀԱՅԷ ՔՈՒՆԵՅ ԿԷ ՉԱՐԹԻ

Ա՛հա՛ շշնչեց քաղցրը զեփիւռիկ,
 Դեռ մենք հայերըս կը քնենք լռիկ,
 Ամեն ոք սուաւ կոփել իր խփիկ,
 Որպէս զի դարնան վարէ իր արտիկ:

Ձօրավարը կանչեն իրանց զօրքերու,
 Որ շուտով սրբեն ժանգըն սրբու.
 Թամիներ հազցնեն նժոյգ ձիերու,
 Երթան թշնամեաց դաշտեր ներկելու:

Ձարթի՛ք, հա՛յ եղբարք, քանի՞ մէկ քնենք,
 Կուզան թշնամեաց խուռն բազմութիւնք,
 Ճակատ առ ճակատ պէտք է խիզախներ,
 Որպէս զի փրկենք սիրուն հայրենիք:

Հասաւ ժամանակ, պէտք է գործելու,
 Թշնամու լուծը մեզնից խզելու.
 Տանք մեր սրերը շուտով սրելու,
 Որպէս կարենամք պատիւ փրկելու:

Գէ՛հ, շտապեցէ՛ք, դէպ ի գէն, ի սուր,
Ահա՛ թշնամին, եկաւ մինչեւ ս՛ւր . . .
Շուտով հասնինք մենք, առնենք այն բլուր,
Խորտակենք վատերի բանակն ընդհանուր:

Մեզի կ'սպասէ աշխարհն Հայաստան,
Ինչու որ մենք ենք նրան ապաստան,
Թափենք սուրբ արիւն, լինենք քաջ պաշտպան,
Վանենք թշնամին հողէն Հայկազեան:

Բա՛ւ է, եղբարք, մենք այսրան տարիներ,
Լինենք թշնամու անարգ գերիներ,
Նոցա լծին տակ դենենք մեր վզեր,
Քաշենք խոչնդոտ ու գառըն ցաւեր:

Դուք Հայաստանի քաջ հարազատներ,
Շուտով կազմեցէ՛ք խրոխտ բանակներ,
Կը յիշէ՞ք արգեօք մեր նախնի քաջեր,
Ինչպէ՞ս քանդէին թշնամու բերդեր:

Ուրեմըն առնենք աէգ ու նիզակներ,
Կտրենք թշնամու զօրքի ճամբայներ,
Որ չը կարենան մտնել մեր հողեր,
Քանդեն, աւերեն հէգ հայի տներ:

Ափսո՛ս թող լինին մեզի այս օրեր,
Եթէ մենք թողնենք Հայաստանն անտէր,
Միթէ սակա՞ւ են մեզնից այն քաջեր,
Չը փռեն գետին՝ իժից գիակներ:

Ա՛լ չի կայ միջոց, յոյս տանք մեր սրտին,
Կարգանք հրաւէր՝ քաջ զօրագնդին,
Շուտով մենք հասնինք մէջ մարտի դաշտին,
Թափենք զնդակներ թշնամու գլխին:

Գետին տապալներ նոցա դիակներ,
Որ տուած են մեզ անթիւ խոր վէլքեր,
Կը կարծեն մեզի իբրև կոյր հաւեր,
Այժմ՝ ցոյց տանք մենք թէ՛ ի՛նչ են Հայեր:

Արդէն պատրաստ է ամբողջ Եւրոպան,
Որ վերականգնէ չքնաղն Հայաստան,
Միայն կարօտ է հայի քաջ տղան,
Մէկը տայ իրեն ահեղ հրաման:



Ա Ս Տ Ղ Մ Ը

Առաւօտեան լուսադէմին,
Աստղ մը տեսայ խիստ փայլուն,
Անդէն և անդ գրաւուեցայ,
Նորա լոյսին վառվառն:

Ինչպէս ոստին վրայ վարդը,
Գեղափթիթ ծաղկումով,
Վառ գոյնովը նախանձ կ'ազդէ,
Անմահական բուրումով:

Ես իմ կեանքում չէի տեսած,
 Դորա նման գեղունի,
 Իր բնական թարմիկ ցոլքով,
 Փայլ է տալիս աշխարհի:

Շողշողում է երկնածոցում,
 Ազամանգ մը պսպղուն.
 Մարգարիտներ այտերիցըն,
 Կաթկթում է ցողցողուն:

Ծնկի գալով, գլուխ տուի,
 Երեսս հողին քսեցի.
 «Փառք քո անբիծ սուրբ ծագմանըդ»,
 Իհար բիւր անգամ ասացի:

Եւ ուխտեցի չի մոռանալ,
 Անգին գէմքը չքնաղուն,
 Որ նա ծագեց իմ խոր սրտի,
 Վերբերով լիք էջերուն:

Սա զերդ փայլուն նորեկ աստղը,
 Ուչք գրաւէր ազգերուն:
 Բայց դեռ նորա՝ իւրեանց միտքը,
 Չը յայտնեցին . . . հայերուն:



Հ Ա Յ Ա Ջ Գ Ա Ս Է Ի Ը

Շատ շատերին ճանաչում եմ,
 Որք են անկեղծ ազգասէր . . .
 Ինչ որ նոցա սրտերի մէջ,
 Կան լիք օձեր, չեմ հաշուեր:

Իւրեանց շաւրտ լեզուակներով,
 Վերէն վարէն թակում են,
 Երբ գործնական բոպէին,
 Տե՛ս, թէ ինչպէ՛ս կձու՞մ են:

Հայցէք վիճակ ողորմելի,
 Մեր սեւաբաղդ ժողովրդին.
 Կարկառեցէք ձեր ձեռներըն,
 Խլել մահէն դժբաղդին:

Տօ՛, անիծեալ, ի՞նչ ես փչում,
 Դէ՛հ, այստեղից շուտ կորչիր.
 Այդ ձեռներըդ բեզի բռնէ,
 Մեր գրպանին մի՛ գպչիր:

Իսկոյն նոցա բերաններէն,
 Այս խօսքերը կը լսուին.
 «Մենք լոկ միայն պարտաւոր ենք,
 Բարին ուզել հայ ազգին»:



ՍԻՐԷ՛ ԶԱՅՐԵՆԻՔԴ

Օտարի վարդին,
Զը փոխես փուշըդ,
Կը թունաւորէ,
Զերդ բնբոյշ կեանքըդ:

Սիրի՛ր Հայրենիքդ,
Սիրի՛ր հեգ ազգըդ,
Սիրի՛ր հարազատ,
Սուրբ հողդ ու բարըդ:

Չ'տաս օտարին՝
Երբեք, քո սէրդ,
Որ նա ծաղրանքով,
Շոյէ պատկերըդ:

Թիթեռնի նման,
Մի՛ ըլլար անմիտ.
Ուրիշի ծաղկանց,
Զոհուող միամիտ:

Օտարի ժպտին,
Մէջը թոյն՝ լիք է.
Միշտ աշխատում է,
Որ բեզ թակարդէ:

Կեղծ բծնանքներով,
Գրաւէ բեզ ան.
Մինչ խլէ կեանքըդ,
Դնէ գերեզման:

Թէև նա բեզ հետ,
Մեղը ու շաքար է,
Բայց սրտում սեր սեւ,
Օձեր պառկեր է:


Եւ չունի հանգիստ,
Մտայուզուել է.
Թէ ո՛րպէս բեզի,
Գետին տապալէ:

Օտարին անբուն,
Դաւին մէջ երբ դուն,
Թէ իյնաս, եղբա՛յր,
Պիտ՝ տաս քո գլխուն:

Եւ կենաց օրերդ,
Գեղնից ա՛լ խզուած.
Անհուն անդունդի,
Խոր խորը ընկղմած:

Իսկ՝ հայրենիքիդ,
Թէ չըլլաս տէրը,
Մատնես եղբայրըդ,
Թշնամու ձեռը:

Ո՛հ, յայնժամ ազգիդ,
Կը լինիս միակ,
Աւելորդ, անպէտ,
Մի զազիր դիակ:



Ն Ա Թ Ա Ն Ձ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա՛խ, տուն քանդող նախանձութիւն,
Ե՞րբ դու Հային պիտ' թողնես.
Հաւատարիմ՝ քեզ ծառայող,
Այս կոյր ազգին գերել ես:

Փաթաթուելով օձիքնոցէդ,
Եւ պինդ կողմըդ հարուել է.
Յարգանքները մատուցելով,
Ոտքիկներդ լիղում է:

Եւ պատկերը՝ դիմակի մէջ,
Առած եղբօր մատնում է.
Սա զազրելի քայլերովըն,
Ազգին տունը քանդում է:

Կասկածանքի տեղիք չի կայ,
Ո՛չ, ո՛չ նախանձ նենգամիտ.
Սիրոյդ վառուած, ջանք չէ խնայում,
Գոհացում տալ սոսկ կամքիդ:

Քանի՛ միլիօն սրտերի մէջ,
Այդ թունաւոր սեւ սերմըդ,
Սերմանելով որդւոց որդի,
Յառաջ տանում յաղթումդ:

Քանի Հայը ինքնաճանչ չէ,
Մի՛ վախենար նրանից.
Ո՛չ, նա երբեք իւր երեսը,
Դարձընող չէ քեզանից:

Արմատներըդ խոր հիմնել ես,
Ձեռ մաքրուիր հայ սրտից,
Նա պատրաստ է միշտ ջրի տեղ,
Խմել եղբօր արիւնից:

Եւ ամեն մի հրահանգըդ,
Կատարում է ճշդութեամբ.
Անկեղծ սրտով աշխատում է,
Սուսիկ բուսիկ նրբութեամբ:

Արդ տեսնում է իւր եղբօրը,
Որ թշնամու ոտքի տակ.
Աղբսում է, «ո՛հ, փրկէ՛ զիս»,
Նա չէ լսում աղաղակ:

Այդ չէ խորհում այսօր նրան,
Հապա վաղը իմ վիճակ . . .
Ձէ՛ որ ինձ այ համանման,
Պէս պիտ' ընեն մի դիակ:

Արդէն Հայը վաղուց բեզի,
Ըրեր իրան պաշտելին.
Գոնէ ինքդ խղճայ, նախանձ.
Անմեղ յաջորդ սերունդին:



Պ Ա Տ Ե Ր Ա Ձ Մ

Ծայր հեռաւոր Ձին աշխարհում
Թնդանօթներ որոտում.
Սարսափայել գոռ գոչումներ,
Օր ըստ օրէ աւելնում:

Այդ երկնային կայսրութեան,
 Լայնածաւալ դաշտերում,
 Ռուսք և ճարոնք հանդէս եկած,
 Յաղթութիւն են որոնում:

Փոթորիկը շղարշեր է,
 Մոնկոլների երկրում,
 Եւ ահռելի ընդհարումներ,
 Տեղի տրուէր Մանճուրում:

Այս մեծ խրոխտ երկու ազգը,
 Գերակշիռ ոյժ կազմում,
 Պարզած դրօշը, լանջը եթերի,
 Խիզախ, խիզախ ճակատում:

Վիթխարի ոյժ բանակներով,
 Կուռ հարուածներ հասցնում,
 Գրոհ տալով դէմ միմեանց,
 Անթիւ հոգիք զգեանում:

Սա պատմական հին աշխարհը,
 Ներկայումս բեմ մարտի.
 Մշուշ պատեր լերանց գագաթը,
 Ծխով լեցուեր վառօդի:

Յաղթանակը՝ արդ, պատանի
 Կայսերութեան կը պատկի,
 Խանդ, խրախճանք թօղիօյում,
 Անպատմելի ամենքի:



ՀԱՅԻ ՕՏԱԲԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Հայեր, մինչ ե՞րբ օտարասէր,
 Օտարապաշտ պիտ' ըլլանք.
 Օտարներու կողմն յարելով,
 Մեր աները քանգեցանք:

Մերթ Օհանին, մերթ Օսմանին,
 Մեր կեանքերը զոհեցինք.
 Բայց անգամ մը չեղաւ՝ դորանց,
 Որ սրտերը շահէինք:

Յորչափ հլու ծառայում ենք,
 Դարձեալ նորանց գէշ՝ աչքին.
 Իւրեանց ցոլուն մերկ սրերը,
 'Հա, խրում են մեր կրծքին:

Արձակ մեզնից դժգոհանքներ,
 Միշտ յայտնում են այս մարդիկ.
 — Թէ Հայն ի՞նչ է և կամ ինչո՞ւ,
 Պիտի խօսի իր լեզուիկ — :

Ահա՛ սորանք, արդի ժամուս,
 Մեր արիւնը արբում են.
 Այն պատմական հովիտները,
 Հայի արեամբ ներկում են:

Մենք անխուով, ամեն ասոնք,
 Մեր աչքերով տեսնում ենք:

Գարձեալ նրանց հաւատարիմ,
Դեռ սրտի սէր ձօնում ենք:

Իսկ ոմանքս ալ կրօնափոխ,
Բողոքական ու Լատին,
Որ իբրև թէ հոգիներնիս,
Հանգիստ գտնեն դէպ անդին:

Մի՛ թէ որ մեր տաճարները,
Մեզ քաւելու անզօ՛ր են,
Որ ինկած ենք, ետ չենք քաշոււմ,
Օտարների դռներէն:

Օտարք ինչո՞վ են մեղաւոր,
Մենք ենք՝ մեզի ատողը.
Մե՛նք ենք՝ զիրար խորդ նայողը,
Գիրկն օտարին նեւողը:

Եկէ՛ք, եղբա՛րք, հաշտի համբոյրք,
Տանք միմեանց ճակատներուն.
Պաշտենք միայն մեր սուրբ կրօնք,
Մեր Հայրենիք, Ազգութիւն:

Օտարների քաղցրախօսիկ,
Լեզուաց մէջը կայ լիք թոյն.
Փախենք նորանց մեզի քանդող,
Կեղծ խօսքերէն՝ միշտ հեռուն:

ՈՐՈՒ ՈՐ ԲԱՐԻՔ ՀԱԿԸՆԴԻՒՄ ՉԱՐԻՔ

Բողի տակից, մի այլ գամիւ,
Հանդէս եկաւ դէմ Հային,
Որ հայ կրօնից հոսուած արիւնով,
Յագեցնէ ծարաւին:

Եւ արդէն սա վաղուց օրէ,
Հայի արիւնով կը սնուի,
Նա մեր արեան խիստ սիրահար,
Միշտ խմելու կ'ախորժի:

Ա՛խ հայակեր փուլ պետութեան,
Տմարդային վարմունքէն,
Ահա քանի՛ հոն բիւր բիւրներ,
Արեանց մէջը լողում են:

Որ իւր գահը Հայի բազկով,
Միշտ դարէ դար պահեր է.
Ա՛խ, այն . . . անթիւ բարեաց փոխան,
Մեզ ջնջելու ջանում է:

Քանի՛ միլիօն Հայի կեանքեր,
Դորա օգտին զոհուեր է.
Քանի՛ միլիօն Հայի սրտեր,
Սուր ու նիզակ խրուեր է:

Գէթ անգամ մը՝ Հայի արեան,
Նա չը դրաւ ո՛չ մի գին.

մը՝ նա չը յիշեց,
Հայոց մեծաց բարիքնին:

Գէթ անգամ մը՝ նա չը խղճաց,
Տարաբախտիկ ժողովրդին,
Որ միշտ անկեղծ հաւատարիմ,
Ծառայեր է իր գահին:

Համբոյրներով մատնող Յուդան,
Լըպիրչ տաճիկ խուժանին,
Հրճուանքներով կանգնած նայում,
Հայի փռուած դիակին:

Ո՞ւր է, ո՞ւր է արդարութիւն,
Ո՞ւր է բարեաց բարութիւն,
Որ հա՛յ գլխին հա՛, տեղում է,
Հուսկ, այն . . . միշտ միշտ չարութիւն:

Մեր խնկելի եղբա՛րց արիւնք,
Մենք թողնում ենք երկնքին,
Այն բնական արդարագատ
Եւ անաչառ Աստուածին:

ՍԱՍՆՈՅ ՀՅԻՈՍՆԵՐԸ

Ահա՛ Սասնոյ անմատչելի,
Այն վեհ, հպարտ լեռներէն,
Մեր հարազատ եղբայրներն,
Խիզախ, խիզախ կուում են:

Թրբաց երկչոտ զօրավաշտեր,
Հաղարներով փռում են,
Մեր դարեւոր հին, նոր նախնեաց,
Վրէժները լուծում են:

Օսմանների դիակներով,
Այդ աշխարհը ծածկում են,
Եւ ապառժոտ լերանց լանջքէն,
Արեանց վտակը վիժում են:

Քիւրտ ցեղային վոհմակներն,
Լեղապատառ փախչում են,
Հայ պատանեաց դնդակներէն,
Գետնատապալ լինում են:

Կեցցե՛ն Սասնոյ քա՛ջ հերոսներ,
Հայաստանի փրկիչներ,
Նոցա համար նախատանք է,
Մահէն երես դարձուներ:

Ահա՛, Հա՛յեր, արդ տեսնում ենք,
Արիւնակից եղբայրներ,
Կեանք չեն խնայում, իւրեանց արեամբ,
Լուանալու լայն դաշտեր:

Ատելի է որ այն Հայը,
Իւր եղբօրը չի օգներ,
Սառած սրտով չի րած նայում,
Ձէն ի ձեռին չի

Միթէ դա՞րձեալ խոնարհ գլուխ,
Որպէս արձան անշարժունք,
Դէ՛հ, խաւարտի դարեր մեզնից,
Ելնենք իսպառ անհետենք:

Ազատ տեսներ, ազա՛տ, ե՛ղբարբ,
Մեր հայրենեաց լեռները:
Ազատ խօսներ, ազատ Հայկեան,
Մեզ նուիրած բարբառը:

Ազատ գրգուենք, ազատ համբոյր,
Տանք սիրասուն վարդերուն
Ազատ կեանք մեր, ազատ տեսներ,
Սուրբ աշխարհը մեր սիրուն:



ՀԱՅ ՀԱՐՈՒՍՏԸ

Ա՛խ դու, Հա՛յ հարուստ, սառցապատ սրտով,
Դէն կանգնած միայն նայում ես նայում,
Դա չէ՛ պատիւ բեզ և ոչ քո տոհմին,
Բա՛ւ է խնկարկես այդ չաստուածուհին:
Դեռ 'հա՛ պաշտում ես այդ դեղին պարկին,
Միթէ չե՞ս տեսնում այն արեան վտակ,
Քո ազգի եղբարց կրծքերէն վազում,
Թ՛չնամեաց սրով՝ հողիք աւանդում:



Այդ կարմիր հեղեղը չե՛ն օտարների,
Այլ քո հարազատ հէգ եղբայրների.
Մի՛ լինիր Յուզա, Կայէն և Համիտ,
Փուլթա՛ կատարել քո պարտքը խղճիդ:

Արդէն տեսնո՛ւմ ես վիճակը ազգիդ,
Թէ չուզե՛ս փրկել մահառիթ սովից.
Տա՞յ գովեստ ազգդ, ասա՛, քո ինչի՞դ . . .
Սրբի՛ր անունդ Հայի մատեանից:

ԿԵԱՆՔՈՒ ՏՆՈՒՄ

Ես իմ կեանքումս չը տեսայ օր մը,
Որ լինէր գէթ ինձ հանգստեան ժամը.
Այլ մռայլ ամպեր գլխիս կուտակուած,
Միշտ հազած սեւեր, ցաւերով պատուած:

Երկինքն է արդէն՝ այս եղեաց վկայ,
Գուրգուրում էի նազելուս վրայ.
Նա էր թագ գլխուս, Դըշտոն սրտիս յոյս,
Հողույս պաշտելին, փլոր ծաղիկ կոյս:

Դեռ նո՛ր էր բացուած կոկոնի նման,
Լուսնեակից պայծառ, անուն Պալասան.
Ձինջ գարնան չքնաղ, մանիշակ ծաղիկ,
Էր ինձ հոտոտուն, հոյլ վարդից փնջիկ:

Ես ծնողացս մահովն ու վշտով,
Հախալում էի անբոյժ վէրքերով.
Սիրունոյս գոյժն ալ հապճեպ սուբալով,
Ո՛հ, այդ ալ դրօշմաւ ճակտիս ըշտապով:

Կեանքիս ծաղիկը ձեռքէս խլուելով,
Մատաղ եւ սօսի տիպար հասակով.
Ա՛խ, գնա՛ց նա զո՛հ, անխիղճ բընութեան,
Գրգուելով մօրը, մըտաւ լռարան:

Իսկ ինձ թողնելով սուգ, լաց՝ յիշատակ,
Որ ողբամ սիրոյն, անուն շարունակ.
Արդ, այս է իմ պարտք, տալ հողոյն անմահ,
Օ՛, չիրիմը ըրաւ, իրան յաւէտ գահ:



